



24. ՏԱՎԱՄ, ՏԱՎԱՄ, ՏԱՎԱՄ:

Մարդըմ կէղնի, կհ'ելի կէրթա խարիպուկենն աշխատելու, կը դատի մեկ հարիր օսկիմ՝ օրըմ լե կըսե. «Հ'ելնիմ էրթամ իմ էրկիր»:

Կը մտածե. «էրթամ իմ էրկիր, ես հարիր օսկի աշխատեմ իմ, տաս քսան օսկին կուտիմ, հար էրթամ էրկիր, կը մնա վաթսուն եթմիշ օսկի,—ես վաթսուն եթմիշ օսկով ի՞նչ էնիմ: Կէրթամ ուրիշ տեղըմ, իմ փարենն կիտամ մազպուդ մարգում օր պահե, կէրթամ հարիր օսկի լե կաշխատիմ, կիգամ, կէրթամ իմ տուն»:

Կը նստի գյամին գիգա քաղաք մի: Կելնի դուրս, կը հ'ընկնի քաղքի մեջ, կը պտըտվի. «Ո՞ր թուճրին իտամ պահե, ո՞ր թուճրին շիտամ»:

Կէրթա ճամբե մի, կտեսնա օր մոլե մի կանուկ է ու վազ կիտա ժողովրդին, թե. «Հըմլա էղեք, հըմլա էղեք, գողութենն չէնիք, ինչ օր պետքն է»:

Կըսե.—Վոլլահի, ես իմ փարենն իդա մոլին պըտի տամ պահե:

Կըսե.—Մո՛լա:

Մոլենն կըսե.—Ի՞նչ է:

Կըսե.—Հարիր օսկի ունիմ, միտք էրի էրթանք իմ տուն, տեսա իրարուց չելնի. տաս քսան օսկի մասրաֆ կէղնի հարի էրթամ տուն, կը մնա վաթսուն եթմիշ օսկի, ըսի, վոլլահի, կը տանիմ զիմ փարենն կիտամ մազպուդ մարգում՝ մոտ՝ պահե, հարիր օսկի լե դատիմ, էրթամ առնիմ հ'իրարու հետ էրթամ: Էկա էդա քաղքի մեջ

1 Դա՛տս, դա՛տս, դա՛տս (հայցս) (Մ. Կ.):

օլորտա, քզնե մազպուդ մարդ շտեսա, բերեր իմ կիտամ պահիս,
էրթամ հարիր օսկի լե աշխատիմ, հիգամ առիմ էրթամ:

Մուկն կըսե.—Շատ աղեկ, դիր շորի մի մեջ, բերան աղեկըմ
կապե, մոհրե, թալ ինա տեղ, դնա:

Մարդ կը բերե աղեկ մի կպլուլե շորի մեջ, բերան կը կապե,
կը մոհրե, կիտա մուկն:

Մուկն լե կառնե թալե ջամու սնտուկ:

Մարդ կը թորկե կէրթա, կէրթա էդա անգամ ուրիշ քաղաք մի,
տարիմ կը մնա: Հարիր օսկի կաշխատի՝ էլման կը դառնա գիգա:

Կը դառնա գիգա էտ տեղ, կընկնի մուկն կը գաշե, կէրթա ճամ-
բու մեջ կը գտնի:

Կը գտնի, բարե աստու բարին կըսեն հիրարու:

Կըսե.—Մո՛լա, ընծիկ կը ճաննա՞ս:

Մուկն կըսե.—Չէ՛, չըմ ճաննա:

Կըսե.—Ծն էն մարդն իմ, օր հերու հարիր օսկի բերի տվի քըզի
պահ, թողի գացի:

Մուկն կըսե.—Հա՛, միտքս հ՛ընկալ. քու փարեն մըկա կբերիմ
կիտամ, առ ու գնա:

Կէրթա կբերե կիտա մարդուն, կըսե.

—էդա քու փարեն, կուզիս բաց իշքե, չգաս վերջ ասիս իմ
փարեն պակա՞ս է:

Մարդ կըսե.—Ջա՛նըմ, ես ամնիաթ կէնիմ քըզի,—կառի ուր
փարեն կէրթա:

Ճամբու հետ կըսե. «Կա՛նի, իմ փարեք հանիմ, համրիմ, տես-
նամ ի՛նչ խըտար էղավ»:

Կը հանե կը քակե մուկից առած փարի հանգուրց, կը տեսնա
օր, հ՛ըմեն տաս փարա ու հինգ փարա է լըցուկ մեջ:

էդ օր կը տեսի՝ գլուխ կուռի, խելք կը թոցու, կը դառնա գիգա
հետ, կըսե՝ «Ծն թագավորին արզուհալըմ պիտի իտամ»:

Կէրթա, կը տեսի օր, քյաթըպ նստեր է արզուհալ կը գրե:

Կըսե.—Քյաթըպ, քանի՞ խուռուշով արզուհալ մի կը գրես:

Քյաթըպ կըսե.—Հինգ խուռուշով:

Մարդ կըսե.—Ծն քըզի քսան խուռուշ կիտամ,—կը հանե քսան
խուռուշ կը դնե քյաթըպի ձեռք:

Կըսե.—Ի՞նչ օր կըսիմ, դու էն պըտի գրես:

Քյաթըպ կը մտածե. «Ջա՛նըմ, ես էդ մարդու ըսածն գրիմ,
բալքիմ թագավոր կանչեց տարավ իմ գլուխ զարկեց, չըմ գրի»,
բայց քսան խուռուշի ձեն օր լսեց, ձեռքեր թուլցան, առավ թուղթ
ձեռք:

Կը կանչե ուր վազիրներուն, վազիրներ լե շըն կըրնա իրարուց ջոկե, կը կանչե մոլեն կրերե:

Կըսե.—Մո՛լա, ապրիս դու ու քու հունար, արի տեսնաք էդա խալիչի հին ծակ ո՛րն է, նորն ո՛րն է:

Մոլեն դիզա, կըսե. «էդա հին ծակն է, էդա լե՛ նոր»։ Կը ցուցընե ուր դործա՛յ տեղ:

Թագավորն էդ օր կը տեսնա, կըսե.

—Վոլլահի մարդու գանգատ օղորդ է, դողն հ՛ելավ. հալբաթ էդա ծակ լըցնող, էդ րան լե կըրնա էնե:—Կըսե.—Մո՛լա, մեկըմ օր տարիմ աշխատի խարիս քրկրի մեջ, բերե հարիր օսկի տա յամ իմ մոտ, յամ քու մոտ պահ, վերջ մենք հ՛ելնինք, էդ հարիր օսկու տեղ տասնոց ու հնգնոց դնենք, էն մարդու պատիժն ի՞նչ է:

Մոլեն էդ օր կը լսե.—Վա՛յ, քաքն հ՛ելավ,—կըսե,—էն մարդու պատիժ բռնել ներս թալելն է:

Թագավոր կըսե.—Մո՛լա, է՞դ է քու արդար դատաստան:—Կը դառնա սադրազամի ու վեզիրներու վրա, կըսե.—Դուք ի՞նչ կըսեք:

էնոնք լե կըսին.—էնոր պատիժ պետք է յոթ տարվան խամ կապուկ ջորին բերեն, կապին էնոր պոչ ու թողին:

Թագավոր կըսե.—է, մո՛լա, բեր հ՛իդա մարդու հարիր օսկին տուր:

Մոլեն կէրթա մարդու հարիր օսկին կբերե, կիտա, մարդ կէրթա ուր ճամբու հետ:

Թագավոր կը ճամբե յոթ տարվան խամ կապած ջորին կը բերե, մոլին կը կապե պոչն ու կը թողե քարե քար, մոլեն կընե ազուն, դառնա, գա տուն:

Աստծուց իջավ իրեք խնձոր՝ մեկ ասողին, մեկ՝ լսողին, մեկը լե՛ անկաճ էնողին:

